ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Պ. Սաֆարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ 2014 թվականի նոյեմբերի 19-ին ստորագրված՝ «Զարգացման քաղաքականության երկրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ Վարկատու) միջեւ ստորագրվել է 2014 թվականի նոյեմբերի 19-ին, որի նպատակն է 75.000.000 (յոթանասունհինգ միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկային միջոցներով (այսուհետ՝ Վարկ) ֆինանսական աջակցություն ցուցաբերել Համաձայնագրի առդիր 1-ի I բաժնում նախատեսված ծրագրի (այսուհետ՝Ծրագիր) կատարմանը, մասնավորապես՝ տեսչական մարմինների համակարգի, մաքսային գործընթացների եւ օդային փոխադրումների, ինչպես նաեւ վարկերի հասանելիության, քաղաքացիական ծառայության, էլեկտրոնային կառավարման, հարկային եկամուտների հավաքագրման գործընթացների բարեփոխումների, հանքային ոլորտում բնապահպանական կայունության եւ հանրային ենթակառուցվածքների կայունության բարելավման ու սոցիալական աջակցության ընդլայնման բնագավառներում:

Համաձայնագրի առդիր 1-ի II բաժնի «Ա» կետի համաձայն՝ Վարկառուն կարող է օգտագործել Վարկի միջոցները նաեւ լրացուցիչ այն ցուցումների դրույթներին համապատասխան, որը Բանկը կարող է ծանուցման միջոցով նախատեսել Վարկառուի համար:

Ըստ Համաձայնագրի II հոդվածի՝ Վարկառուի կողմից վճարման ենթակա սկզբնական միջնորդավճարի չափն է Վարկի գումարի 0.25%-ը, իսկ վճարման ենթակա պարտավորության վճարինը՝ Վարկի չօգտագործված մնացորդի տարեկան մեկ տոկոսի մեկ քառորդը (0.25%):

Վարկի հիմնական գումարի մարման ժամկետը 25 տարի է, որից 14.5 տարին՝ արտոնյալ տոկոսադրույքով:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է կազմում նաեւ 2-րդ առդիրը («Մարման ժամանակացույց»):

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ հավանություն է տվել Համաձայնագրին:

3. Բացի Համաձայնագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան Վարկի մարման եւ դրանով պայմանավորված պարտադիր վճարների կատարման հետ կապված կոնկրետ պարտավորություններից, Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նաեւ հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- առանց ուշացման Բանկին տրամադրել Համաձայնագրի II հոդվածի դրույթներին վերաբերող այն տեղեկատվությունը, որը ժամանակ առ ժամանակ Բանկը կարող է ողջամտորեն պահանջել,

- Բանկի հետ փոխանակել մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի եւ Ծրագրի իրականացման մասին Վարկառուի տեսակետը,

- Բանկի ուսումնասիրմանն ու գնահատմանը ներկայացնել Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվություն՝ այնպիսի մանրամասնությամբ, որ Բանկը ողջամտորեն կպահանջի,

- Բանկին տեղեկացնել ցանկացած իրավիճակի մասին, որն էապես կհակասի Ծրագրի նպատակներին կամ Ծրագրի շրջանակում ձեռնարկված որեւէ գործողության իրականացմանը,

- ապահովել, որ Վարկի միջոցների ավանդադրումից անմիջապես հետո Վարկառուի բյուջետային կառավարման համակարգում հաշվառվի համարժեք գումար՝ Բանկի համար ընդունելի կարգով,

- չօգտագործել Վարկի միջոցները բացառված ծախսեր ֆինանսավորելու նպատակով (Համաձայնագրի առդիր 1-ի Բաժին II, «Ե» կետ),

4. Համաձայնագրում նախատեսված են կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարումն ապահովող այլ դրույթներ, որոնք բխում են նաեւ 2012թ. մարտի 12-ի՝ «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի վարկերի ընդհանուր պայմաններում» կատարված փոփոխություններից, ինչպես նաեւ Համաձայնագիրը գործողության մեջ դնելու ընթացակարգեր:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սահմանադրաիրավական խնդիրներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ 2014 թվականի նոյեմբերի 19-ին ստորագրված՝ «Զարգացման քաղաքականության երկրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1177